| Արժեթղթեր, այդ թվում՝<br>- առևտրական նպատակով պահվող<br>- վաճառքի համար մատչելի<br>- մինչև մարման ժամկետը պահվող<br>*-ռեպո* | | | | *116831*<br><br><br>*116831* | *2904277*<br><br><br>*2904277* | *204003*<br>*18765*<br>*101763*<br>*83475* | *3225111*<br>*18765*<br>*101763*<br>*3104583* |
| Այլ պահանջներ | | | | | | | |
| Հետհաշվեկշռային պայմանական ակտիվներ | | | | | | | |
| Պայմանագրային պահանջներ** | *119* | *6843* | | *4194* | *1415505* | | *1426661* |
| *Ընդամենը* | *6042* | *663274* | | *125263* | *4319782* | *298546* | *5412907* |

| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Մարմանը մնացել է | | | | | Անժամկետ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մինչև 1ամիս | 1-3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1 տարուց ավելի | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 2763094 | | | | | | 2763094 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | | | | | 51120 | 51120 |
| Պարտավորություններ ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով | | | | | | | |
| Այլ պարտավորություններ | 2684 | 5115 | | | | 15275 | 23074 |
| Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ | | | | | | | |
| Պայմանագրային պարտավորություններ*** | 10940 | | | | | | 10940 |
| **Ընդամենը** | 2776718 | 5115 | | | | 66395 | 2848228 |

## Նախորդ ժամանակաշրջան

| ԱԿՏԻՎՆԵՐ | Մարմանը մնացել է | | | | | Անժամկետ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մինչև 1ամիս | 1-3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1 տարուց ավելի | | |
| Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում | | | | | | 214 | 214 |
| Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 30407 | 777368 | | | | 9860 | 817635 |
| Հաճախորդների նկատմամբ պահանջներ | 1796 | 5655 | | | | 15747 | 23198 |
| Արժեթղթեր, այդ թվում՝ | | 22101 | | 84948 | 1343407 | 108661 | 1559117 |
| - առևտրական նպատակով պահվող | | | | | | 6766 | 6766 |
| - վաճառքի համար մատչելի | | | | | | 101895 | 101895 |
| - մինչև մարման ժամկետը պահվող | | 22101 | | 84948 | 1343407 | | 1450456 |
| -ռեպո | | | | | | | |
| Այլ պահանջներ | | | | | | | |
| Հետհաշվեկշռային պայմանական ակտիվներ | | | | | | | |
| Պայմանագրային պահանջներ* | 67 | 6090 | | | 283902 | | 290059 |
| **Ընդամենը** | 32270 | 811214 | | 84948 | 1627309 | 134482 | 2690223 |

| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Մարմանը մնացել է | | | | | Անժամկետ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մինչև 1ամիս | 1-3 ամիս | 3-6 ամիս | 6-12 ամիս | 1 տարուց ավելի | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 1150354 | | | | | | 1150354 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | | | | | | |
| Պարտավորություններ ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Այլ պարտավորություններ | ***7425*** | | | | | ***15275*** | ***22700*** |
| Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ | | | | | | | |
| Պայմանագրային պարտավորություններ** | ***3266*** | | | | | | ***3266*** |
| ***Ընդամենը*** | ***1161045*** | | | | | ***15275*** | ***1176320*** |

* «Պայմանագրային պահանջներ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված (հաշվեկշռում կամ հետհաշվեկշռում չարտացոլված), սակայն պայմանագրով նախատեսված ստացվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

** «Պայմանագրային պարտավորություններ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված, սակայն պայմանագրով նախատեսված վճարվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

Ճեղքվածքը բացասական լինելու դեպքում անհրաժեշտ է բացահայտել ճեղքվածքի ֆինանսավորման աղբյուրները և դրանց արժեքը:

## Ծանոթագրություն 38. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»

**Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և գլխավոր տնօրենի համատեղ որոշմամբ սահմանվել են ընկերության գործունեության տնտեսական նորմատիվները, որոնցից են.**

1. **կանոնադրական կապիտալի նվազագույն չափը**
2. **ընդհանուր կապիտալի նվազագույն չափը**
3. **ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը:**

**Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվել է 1 միլիոն դրամ, իսկ ընդհանուր կապիտալի նվազագույն չափը՝ 300 միլիոն դրամ:**

**ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվել է 12 տոկոս:**

**2010թ-ի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Ընկերության ընդհանուր կապիտալի միջին օրական մեծությունները համապատասխանաբար կազմել է 1182926 հազար դրամ, 1133804 հազար դրամ և 1137493 հազար դրամ:**

**2010թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև հարաբերակցությունը կազմում է 89.09%:**

**Ինչպես տեսնում ենք Ընկերության գործունեության փաստացի ցուցանիշները բազմակի անգամ գերազանցում են սահմանված նորմատիվների մակարդակները:**

Ծանոթագրություն 39. «Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք»

**Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ նրանց շուկայական գնանշման վրա, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե շուկայական գնանշումը հասանելի չէ, գործիքի իրական արժեքը չափվում է կիրառելով գնորոշման մոդելներ կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկան:**

**Երբ կիրառվում է զեղչված դրամական հոսքերի տեխնիկան, գնահատված ապագա դրամական հոսքերը հիմնված են ղեկավարության լավագույն գնահատականների հիման վրա և զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Երբ գնորոշման մոդելներն են կիրառվում, ներմուծվող փոփոխականները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական համապատասխան փոփոխականների վրա:**

## «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### 2010Թ-Ի ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. 2010թ-ի ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել ընկերության առջև դրված խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք տվել են իրենց արդյունքները:

***Ընկերության ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում:*** Այս խնդրի լուծման շրջանակներում ընկերությունը հիմնականում վարել է պասիվ ներդրումային քաղաքականություն՝ փորձելով գտնել ցածր ռիսկային ներդրումային գործիքներ: Որպես այդպիսին ընդունվել է բանկային ավանդը: Բացի այդ որոշակի ոչ մեծ ներդրումներ են կատարվել նաև տեղական և արտասահմանյան կորպորատիվ արժեթղթերում:

***Մատուցվող ծառայությունների որակի բարձրացում և համապատասխանեցում միջազգային չափանիշներին:*** Այս խնդիրի լուծումը հատկապես կարևորվում էր այն պատճառով, որ Ընկերությունը բացի տեղացի հաճախորդներից ունի նաև բազմաթիվ արտասահմանյան հաճախորդներ, որոնք սովոր են աշխատել միջազգային չափանիշներով: Այդ պատճառով ընկերությունը անընդհատ ուսումնասիրում է արտասահմանյան շուկաներում նմանատիպ ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ծառայությունների մատուցման եղանակները՝ փորձելով ներդնել նրանց կուտակած փորձը իր կողմից ծռայությունների մատուցման ընթացքում:

***Ընկերության համար նորույթ հանդիսացող ծառայությունների գծով հաճախորդների ներգրավում:*** Այս խնդիրը հատկապես կարևորվել է անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայության առումով, քանի որ վերջինս պահանջում է տեխնիկական և մարդկային բավական լուրջ ռեսուրսներ և շահութաբեր է դառնում միայն որոշակի մեծ թվով հաճախորդների առկայության դեպքում: Խնդրի լուծման նպատակով իրականացվել են որոշակի մարկետինգային միջոցառումներ, մասնավորապես հեռախոսազանգերի և գրությունների միջոցով մատուցվող ծառայությունները և դրանց պայմանները ներկայացվել են բազմաթիվ պոտենցիալ հաճախորդների, որի արդյունքում հնարավոր է եղել ռեեստրի վարման հաճախորդների թիվը հասցնել մոտ 100-ի: Բացի այդ իրականացվել են նաև որոշ գովազդային միջոցառումներ, որոնք ուղղված են եղել տերմինալային սպասարկման ծառայության գծով հաճախորդների ներգրավմանը:

***Ընկերության համար նորույթ հանդիսացող ծառայությունների մատուցման ընթացակարգերի հստակեցում և համակարգում:*** Քանի որ Ընկերության կողմից նախկինում չէին մատուցվել անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարմն, արժեթղթերի պահառության և հաճախորդների տերմինալային սպասարկման ծառայություններ, ակնհայտ էր, որ դրանց մատուցման համար նախօրոք սահմանված ընթացակարգերը պետք է ունենային որոշակի թերություններ: Խնդրի լուծման նպատակով համակարգված ձևով արձանագրվեցին բացահայտված բոլոր թերությունները և քայլեր ձեռնարկվեցին դրանց վերացման ուղղութամբ, ինչ հետևանքը եղավ այն, որ մշակվեցին համապատասխան ծառայությունները կարգավորող ներքին իրավական ակտերի փոփոխությունների նախագծեր:

***Աշխատակիցների մասնագիտական մակարդակի կատարելագործում:*** Աշխատակազմի մասնագիտական մակարդակի բարձրացումը միշտ ընկերության առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկն է: Ընկերությունը նպաստավոր պայմաններ է

ստեղծում իր աշխատակիցների ինքնակրթության համար, միշտ խրախուսելով մասնագիտական մակարդակի բարձրացման ցանկացած ձգտում: Միաժամանակ ընկերությունը զերծ չի մնում նաև աշխատակիցներին վերապատրաստման կուրսերի ուղարկելուց կամ այլ կազմակերպությունների ու երկրների համապատասխան մասնագետների հետ փորձի փոխանակման հնարավորություններ տրամադրելուց: Մասնավորապես 2010թ-ի մայիսին ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ընկերության ֆինանսավորմամբ մեկնել է Նիդեռլանդներ ներքին աուդիտորների ամենամյա կոնֆերանսի մասնակցելու նպատակով: Ընկերությունում նաև դասընթաց է կազմակերպվել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում աշխատակիցների գիտելիքների բարձրացման համար:

***Նոր աշխատակիցների ներգրավում:*** Ընկերության գործունեության ծավալների և մատուցվող ծառայությունների տեսականու ավելացմանը զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում ներգրավել նոր աշխատակիցներ: Այս խնդիրն 2010թ-ին ավելի սրվեց ընկերության որոշ աշխատակիցների՝ երեխայի խնամքի արձակուրդ մեկնելու կապակցութամբ: Համենայն դեպս 2010թ-ի համար խնդիրը կարելի է համարել լուծված, քանի որ ընկերությունը կարողացավ գտնել և աշխատանքի ընդունել անհրաժեշտ թվով աշխատակիցներ: 2010թ-ի ընթացքում ընկերությունը աշխատանքի ընդունեց երեք մարդու, որոնցից երկուսը նաև ստացան արժեթղթերի պահառուի մասնագիտական որակավորում և այժմ զբաղվում են արժեթղթերի պահառության և անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայության մատուցմամբ:

***Ներքին հաշվառման համակարգի կատարելագործում:*** Այս խնդրի լուծումը հատկապես կարևորվում էր այն պատճառով, որ ճիշտ կազմակերպած ներքին հաշվառումը հաճախորդների հաշիվների սպասարկման որակը և արագությունը բարձրացնող ամենակարևոր գործոններից մեկն է: Այս խնդրի լուծման նպատակով հրավիրվել են համապատասխան մասնագետներ և նրանց հետ համատեղ աշխատանքի միջոցով կազմվել է հաճախորդների պատվերների գրանցման և հաշիվների վարման համակարգչային ծրագիր, որը առավելագույնս համապատասխանում է ընկերության և ընկերության գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջներին: Առանձին համակարգչային ծրագիր է մշակվել նաև արժեթղթերի պահառության և անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման համար: Կատարվել են նաև աշխատանքներ հաճախորդներին իրենց հաշիվների մնացորդները և շարժը ինտերնետով տեսնելու հնարավորություն տալու ուղղությամբ, որոնք դեռևս ավարտին չեն հասցվել:

***Ընկերության գործունեության տեխնիկական պայմանների բարելավում:*** 2010թ-ի ընթացքում ընկերությունը նոր ծառայությունների մատուցման համար ձեռք է բերել նոր համակարգիչներ և այլ հարակից սարքավորումներ:

***Արտասահմանում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հետ նոր գործարար կապերի ստեղծում և հների ամրապնդում:*** 2010թ-ի ընթացքում ընկերությունը անընդհատ բանակցություններ է վարել իր արտասահմանյան գործընկերների հետ՝ ձգտելով էլ ավելի ամրացնել նրանց հետ ունեցած գործարար կապերը, ինչպես նաև ավելի նպաստավոր պայմաններ սահմանել նրանց միջոցով հաճախորդների սպասարկման համար: Այս խնդրի լուծումը հատկապես կարևորվում է հաճախորդների տերմինալային սպասարկման ծառայության առումով, քանի որ վերջինս անմիջականորեն իրականացվում է արտասահմանյան գործընկերների միջոցով: Ընկերությունը բանակցություններ է վարել նաև նոր հնարավոր գործընկերների հետ՝ փորձելով գործարար կապեր հաստատել նաև նրանց հետ, ինչը հնարավորություն կտա մեծացնել

նաև հաճախորդների տերմինալային սպասարկման հնարավորությունները և նրանց առաջարկվող ֆինանսական գործիքների տեսականին:

***Ընկերության ճանաչվածության աստիճանի բարձրացում:*** Այս խնդիրը շարունակում է մնալ շատ կարևոր նոր հաճախորդներ ներգրավելու տեսանկյունից: Աղ կապակցությամբ ընկերությունը շարունակել է տարածել իր մասին և մատուցվող ծառայությունների մասին համառոտ տեղեկություններ ներկայացնող թերթիկներ, իսկ ընկերության կայքերը արդեն բավական երկար ժամանակ գործում են և պարբերաբար թարմացվում են:

2. Ընկերության ներքին միջավայրում տեղի ունեցած երևույթները իրենց ազդեցությունն են ունեցել ընկերության գործունեության վրա դրա բոլոր բնագավառներում: այդ ազդեցությունը դրսևորվել է հետևյալ առումներով.

ա) Ինչպես և պլանավորված էր, ընկերությունը լրացուցիչ կապիտալ ներգրավելու խնդիր չունեցավ: Ընկերության սեփական կապիտալը գերազանցում է մեկ միլիարդ դրամը, ընդ որում այդ գումարի մոտ կեսը դրամական միջոցներ են, որոնք գտնվում են ընկերության բանկային ավանդային հաշիվների վրա:

բ) 2010թ-ի ընթացքում ընկերությունը մատուցել է հետևյալ ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

1. հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում (այդ թվում հեռացված տերմինալների միջոցով), ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
2. Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին,
3. Ընկերության հաշվին և ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում,
4. Արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացում,
5. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում,
6. Արժեթղթերի պահառություն,
7. Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում,
8. Արտարժույթով դիլերային և բրոքերային գործարքներ,
9. Խորհրդատվության տրամադրում ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում,
10. Արժեթղերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների կազմում և տարածում:

2010թ-ի ընթացքում ընկերության կողմից կատարված գործունեության յուրաքանչյուր տեսակին անդրադառնանք առանձին-առանձին:

***հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում (այդ թվում հեռացված տերմինալների միջոցով), ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում:*** Ծառայության այս տեսակը ընկերության համար հիմնական ծառայության տեսակ է եղել ընկերության գործունեության ամենասկզբից: 2010թ-ի ընթացքում ընկերությունը հաճախորդների հաշվին կատարել է 111634 հազար դրամի գործարք: Գործունեության այս տեսակից ընկերության ստացած հասույթը կազմել է 1345 հազար դրամ: Ծառայությունների այս խմբի հետ կապված կարևոր հանգամանք է այն, որ 2009թ-ի

վերջում ընկերությունը սկսել է իրականացնել իր հաճախորդների տերմինալային սպասարկում, որի շրջանակներում 2010թ-ին սպասարկել է 45 հաճախորդների՝ ստանալով 1184 հազար դրամի հասույթ: Այս ցուցանիշները պլանավորվածից ավելի փոքր են, սակայն դրանք կարող էին շատ ավելի մեծ լինել, եթե չլիներ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, որը ընկերության շատ հաճախորդների ստիպեց վարել խիստ պասիվ ներդրումային քաղաքականություն՝ նվազագույնի հասցնելով նրանց կողմից կատարվող ներդրումների ծավալը՝ այդ թվում նաև Հայաստանում: Որպես այս ծառայության գծով հաճախորդներ 2010թ-ին ինչպես և նախատեսված էր հանդես են եկել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

***Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին:*** Այս ծառայությանը հնարավոր չէ ծավալային գնահատական տալ: Ծառայության այս տեսակը սերտորեն առնչվում է նախորդի հետ: Շատ դեպքերում դրանք անբաժանելի են, այդ իսկ պատճառով որպես այս ծառայության հաճախորդներ կրկին դիտարկվում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում ինստիտուցիոնալ ներդրողները: Ծառայության այս տեսակից ստացված հասույթը նույնպես հնարավոր չէ առանձնացնել, քանի որ ընկերությունը այս ծառայության համար հաճախորդներից առանձին վճար չի գանձում, և այս ծառայության վճարը ներառվում է հաճախորդի հաշվին գործարքների կատարման միջնորդավճարի մեջ:

***Ընկերության հաշվին և ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում:*** 2010թ-ին ընկերությունը իր հաշվին և իր անունից արժեթղերով կատարել է 67427464 հազար դրամի գործարք, որից 288788 հազար դրամը կորպորատիվ արժեթղթերով, իսկ 67138676 հազար դրամը՝ պետական: Պետական արժեթղթերով կատարված գործարքների գերակշիռ մասը կազմել են ռեպո գործարքները: Գործունեության այս տեսակից ընկերության զուտ շահույթը 2010թ-ին կազմել է 90345 հազար դրամ:

***Արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացում:*** Չնայած կազմված պլանին, 2010թ-ի ընթացքում ընկերությունը չի կարողացել կազմակերպել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն, ինչը կրկին կապվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցության, ինչպես նաև Հայաստանի արժեթղթերի շուկայի ընդհանուր պասիվության հետ: Պոտենցիալ թողարկողների մեծ մասը այս անկայուն իրավիճակում, երբ շատ դժվար է գնահատել ներդրողներ գտնելու հավանականությունը, դեռևս պատրաստ չէ ռիսկի դիմել և մտնել արժեթղթերի թողարկման ձևով միջոցների հավաքագրման գործընթացի մեջ: Այս հանգամանքը ստիպում է վերանայել արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված ընկերության հետագա պլանները՝ նվազեցնելով պլանային ցուցանիշները:

***Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում:*** 2010թ-ի ընթացքում ընկերությունը կնքել է արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցման միայն մեկ պայմանագիր, որից ընկերության հասույթը կազմել է 720 հազար դրամ: Այս ծառայությունների մատուցման փոքր ծավալները կրկին պայմանավորված են այն նույն գործոններով, որոնց ազդեցությամբ ընկերությունը չի իրականացրել արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխում: Դրա պատճառը այն է, որ այս ծառայությունը սերտորեն կապված է արժեթղթերի տեղաբաշխման ծառայության հետ և սովորաբար նախորդում է դրան:

***Արժեթղթերի պահառություն:*** Ծառայութան այս տեսակը Ընկերության համար նոր էր: Նախատեսվում էր, որ որպես հաճախորդներ պետք է հանդես գային այն ռեզիդենտ

ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք պետք է օգտվեին ընկերության ծառայություններից արժեթղթերի արտասահմանյան շուկաներում ներդրումներ կատարելու համար, ինչպես նաև այն ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք պետք է օգտվեին ըկերության բրոքերային ծառայություններից տեղական շուկայում: Չնայած սպասումներին՝ ծառայությունից օգտվել ցանկացողների թիվը մեծ չեղավ, ինչի արդյունքում 2010թ-ի ընթացքում կնքված արժեթղթերի պահառության միայն 4 պայմանագիր: Որպես Հաճախորդ հանդես եկան ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

***Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում:*** Այս ծառայությունը նույնպես ընկերության համար նոր ծառայության տեսակ է: Չնայած պլանավորված 200-ի 2010թ-ի ընթացքում հնարավոր եղավ այս ծառայության գծով հաճախորդների թիվը հասցնել մոտ 100-ի միայն, ինչը նույնպես վատ ցուցանիշ չէ: Տարվա ընթացքում կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ իրականում պլանավորված 200 հաճախորդը իրատեսական ցուցանիշ չէր: Որպես այս ծառայության գծով հաճախորդներ հանդես են գալիս ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք ունեն թողարկված հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր: Ծառայության այս տեսակից ստացված հասույթը 2010թ-ին կազմեց 4958 հազար դրամ

***Արտարժույթով դիլերային և բրոքերային գործարքներ:*** Ընկերությունը 2010թ-ին իրականացրել է մեծ ծավալի արտարժութային դիլերային գործարքներ, որոնք, սակայն, ընկերությա համար այնքան էլ հաջող չեն եղել, կապված արտարժութային փոխարժեքների անբարենպաստ փոփոխության հետ: 2010թ-ին ընկերությունը կատարել է 763395 հազար դրամի արտարժութային դիլերային գործարքներ: 2010թ-ի վերջի դրությամբ ընկերության արտարժութային երկար դիրքը կազմել է 619030 հազար դրամ, իսկ արտարժույթի վերագնահատումից ստացված վնասը կազմել է 26705 հազար դրամ: Ընկերությունը կատարել է նաև արտարժույթով բրոքերային գործարքներ՝ կապված իր հաճախորդների՝ արտարժույթով արտահայտված դրամական միջոցները դարամի վերածելու հետ և հակառակը: Այդ գործարքները կատարվել են հաճախորդների համար արժեթղթերով բրոքերային գործարքների կատարման շրջանակներում, ինչպես նաև այն դեպքերում, երբ հաճախորդները ցանկություն են հայտնել ետ վերցնել իրենց բրոքերային հաշիվներում դրամով առկա դրամական միջոցները: Այդ գործարքների դիմաց ընկերությունը հաճախորդներից լրացուցիչ միջնորդավճար չի գանձել:

***Խորհրդատվության տրամադրում ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում:*** Այս ծառայության գծով ընկերությունը ունի երկարաժամկետ պայմանագրեր, որոնցով հաճախորդներին անընդհատ խորհրդատվություն է մատուցում: բացի այդ ընկերությունը 2010թ-ի ընթացքում կնքել է նաև կարճաժամկետ պայմանագրեր, որոնցով խորհրդատվություն է մատուցվել կոնկրետ դեպքի կամ հարցի առնչությամբ: Որպես հաճախորդ հանդես են եկել հայաստանյան բաժնետիրական ընկերությունները: Այս ծառայությունից ստացված հասույթը 2010թ-ին կազմել է 6197 հազար դրամ:

***Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների կազմում և տարածում:*** Ընկերությունը երկշաբաթյա պարբերականությամբ իր հաճախորդներին տրամադրում է Հայաստանի կապիտալի շուկայի վերաբերյալ տեղեկատվական նյութ, որում արտացոլվում են շուկայում տեղի ունեցած բոլոր փոփոխությունները: Այս ծառայությունը մատուցվում է որպես հաճախորդների որակյալ սպասարկման անբաժանելի մաս, որի դիմաց հաճախորդներից

վճար չի գանձվում: Բացի այդ համաձայնություն է ձեռք բերվել «Կապիտալ» բիզնես օրաթերթի հետ, որի համաձայն ընկերությունը ամեն օր որոշակի ֆինանսական վերլուծական տեղեկատվություն է տրամադրում օրաթերթին, որն էլ այդ տեղեկատվությունը հրապարակում է:

գ) Ընկերության 2010թ-ի հասույթը կազմել է 314346 հազար դրամ որից 296144 հազար դրամը տոկոսային եկամուտն է, իսկ 18202 հազար դրամը՝ ոչ տոկոսային եկամուտը, որը ներառում է նաև ընկերության կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտը: Ըկերության ծախսերը կազմել են 268097 հազար դրամ, որից տոկոսային ծախսերը կազմել են 152106 հազար դրամ, իսկ ոչ տոկոսային ծախսերը՝ 115991 հազար դրամ: Ընկերության շահույթը հարկումից հետո կազմել է 31741 հազար դրամ (մոտ երկու անգամ նախորդ տարվա շահույթից պակաս): Ընկերության կառավարման տնտեսական ակտիվության գործակիցը կազմել է 0.12, շահութաբերությունը ըստ ակտիվների՝ 0.01, շահութաբերությունը ըստ կապիտալի՝ 0.03: Վերոնշյալ ցուցանիշների փաստացի մակարդակները շատ ավելի ցածր են դրանց պլանային մակարդակներից: Դա պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնցից ընկերության վրա առավել մեծ ազդեցություն ունեցան մի քանիսը. 1) Հայաստանի արժեթղթերի շուկայում գրանցված ընդհանուր պասիվությունը, 2) ներդրողների և թողարկողների անվստահությունը Հայաստանի արժեթղթերի շուկայի նկատմամբ, 3) ընկերության արտասահմանցի հաճախորդների ֆինանսական վիճակի վատթարացումը, որը թույլ չի տալիս, որպեսզի նրանք ներդրումներ կատարեն հայկական արժեթղթերում, 4) արժութային փոխարժեքների անբարենպաստ փոփոխությունները, որոնց արդյունքում ընկերությունը լուրջ վնասներ կրեց: Վերոնշյալ գործոնները ի վերջո հանգեցրին նրան, որ ընկերությունը, կատարելով պլանավորված բոլոր գործողությունները և ծախսերը, իրականում չկարողացավ դրանց դիմաց ստանալ այն հատուցումը, որը կստանար նորմալ տնտեսական իրավիճակում:

դ) 2010թ-ի ընթացքում ընկերությունը սպասարկել է թվով 259 հաճախորդների: Դրանցից 103-ը օգտվել են իրենց հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելու ծառայությունից, 101-ը օգտվել են անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայությունից, 45-ը օգտվել են ընկերության տերմինալային սպասարկումից, 6-ը օգտվել են խորհրդատվական ծառայություններից, 4-ը օգտվել են արժեթղթերի պահառության ծառայությունից: Ընդհանուր առմամբ ընկերության հաճախորդների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է, ինչը հիմնականում պայմանավորված է ընկերության կոմից մատուցվող ծառայությունների տեսականու ավելացմամբ:

ե) Ընկերության կառավարման համակարգը լիարժեքորեն բավարարում է ներկա պահին ընկերության գործունեության բոլոր բանգավառները արդյունավետ կառավարելու և վերահսկելու համար:

եա) Ընկերության կորպորատիվ կառավարման մեխանիզմը հստակեցված է ընկերության կանոնադրությունում: Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվել, ինչը որոշակի բարդություններ է ստեղծում նոր ներքին իրավական ակտերի ընդունման գործընթացում, քանի որ ընկերությունը բաժնետերեր ունի բազմաթիվ երկրներից, որոնց ներկայությամբ բաժնետերերի ժողով հրավիրելը կապված է որոշակի բարդությունների հետ: Այդ կապակցությամբ չի բացառվում, որ մոտ ապագայում ընկերությունում ձևավորվի նաև տնօրենների խորհուրդ:

եբ) Ընկերությունում գործում է նաև ներքին աուդիտի ստորաբաժանումը, որը վերահսկում է ընկերության գործունեության բոլոր բնագավառները: Այդ

ստորաբաժանումը, բացի ընկերության գործունեության անընդհատ մոնիտորինգից, ամեն ամիս իրականացնում է նաև ընկերության գործունեության ստուգում և բացահայտված ցանկացած խախտման կամ թերացման մասին տեղեկություն է ներկայացնում ընկերության գործադիր մարմնին, Կենտրոնական բանկին, ինչպես նաև կարգավորվող շուկայի օպերատորին և հաշվարկային համակարգի օպերատորին: Միաժամանակ ստորաբաժանումը նաև տարեկան հաշվետվություն է ներկայացնում ընկերության կառավարման բարձրագույն մարմնին՝բաժնետերերի ընդհանուր ժողովին:

եզ) 2010թ-ին Ընկերության համար առավել կարևոր են եղել հետևյալ ռիսկերը.

1. վարկային ռիսկ. գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով,
2. ֆոնդային ռիսկ. ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փափախության, արժեթղթերի գների տատանողականության փոփոխության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
3. տոկոսային ռիսկ. փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որը իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
4. արժութային ռիսկ. արժութային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
5. իրացվելիության ռիսկ.
   a. շուկայական իրացվելիության ռիսկ. շուկայում ընդհանուր իրացվելիության պակասի ռիսկն է, որի դեպքում կարող է հնարավոր չլինել արագ և արդյունավետ ձևով փակել բացված դիրքերը և ստանալ դրամական միջոցներ,
   b. ներքին իրացվելիության ռիսկ. իրացվելիության գործակիցների նվազագույն մակարդակ ապահովելու հնարավորության բացակայության ռիսկ կամ այլ խոսքերով այն բանի ռիսկը, որ ընկերության իրացվելի ակտիվները չեն բավականացնի ընկերության պարտավորությունները կատարելու համար:
   c. բանկերի իրացվելիության ռիսկ. Հայաստանի բանկային համակարգում իրացվելի միջոցների պակասի ռիսկն է, որն ի հայտ է գալիս ռեպո գործարքների կնքման դեպքում:
6. պորտֆելի կոնցենտրացիայի ռիսկ.
   a. գործիքի կոնցենտրացիայի ռիսկ. պորտֆելում մեկ գործիքի գծով վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
   b. գործարքի կոնցենտրացիայի ռիսկ. մեկ տեսակի գործարքի գծով վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
   c. տնտեսական հատվածի ռիսկ. տնտեսության առանձին հատվածում (առանձին տարածաշրջանում կամ երկրում) գրաված վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
7. գործառնական ռիսկ. գործառնությունների կատարման ընթացքում հնարավոր սխալների ռիսկը, որն իր մեջ ներառում է գործարքների կնքման ընթացքում

սխալների, գործաքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման հետ կապված սխալների, սպասարկող բանկերի կողմից փոխանցումների կատարման հետ կապված սխալների, ընկերությունում և գործընկերների մոտ տեխնիկական համակարգերի խափանումների հետ կապված ռիսկը,

8. պատվերների չկատարման ռիսկ. հաճախորդների պատվերները կատարելու հնարավորության բացակայության ռիսկ՝ կապված շուկայում առաջարկի կամ պահանջարկի բացակայության հետ,
9. իրավական ռիսկ. իրավական դաշտում անբարենպաստ փոփոխությունների ի հայտ գալու ռիսկ,
10. տրամադրված խորհրդատվության բացասական հետևանքների առաջացման ռիսկ. ընկերության կողմից տրամադրված խորհրդատվության արդյունքում հաճախորդների կատարած քայլերի բացասական հետևանքներ ի հայտ գալու ռիսկ,
11. թերտեղաբաշխման ռիսկ. տեղաբաշխման գործունեության իրականացման հետ կապված ռիսկն է, որը դրսևորվում է նախապես սահմանված տեղաբաշխման ենթակա արժեթղթերը լրիվ ծավալով տեղաբաշխելու հնարավորության բացակայությամբ,
12. հաճախորդի ներդրումային քաղաքականության փոփոխության ռիսկ. հաճախորդների կողմից նախատեսված ընկերության միջոցով կատարվելիք ներդրումների ծավալները կրճատվելու ռիսկ,
13. գործարար համբավի կորստի ռիսկ. շուկայում հեղինակության անկման պատճառով կորուստներ կրելու ռիսկ,
14. քաղաքական ռիսկ. երկրի քաղաքական համակարգում ցնցումների հետևանքով վնասներ կրելու ռիսկ,
15. Դժբախտ պատահարների ռիսկ. երկրաշարժի, հրդեհի, կողոպուտի և այլ դժբախտ պատահարների հետևանքով կորուստներ կրելու ռիսկ:

Վերը նշված ռիսկերի գնահատման և դրանց զսպման նպատակով ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և գլխավոր տնօրենը համատեղ մշակել են ընկերության գործունեության տնտեսական նորմատիվներ և դրանց հաշվարկման մեթոդոլոգիա: Այդ նորմատիվները հաշվարկվում են օրական և ամսեկան կտրվածքներով և դրանց խախտման դեպքում միջոցառումներ են ձեռնարկվում այդ խախտումները վերացնելու ուղղությամբ:

զ) Ընկերությունը առանձնացված ստորաբաժանումներ չունի և 2010թ-ի ընթացքում չի բացել, ինչը լիովին համապատասխանում է նաև ընկերության գործարար ծրագրին:

է) Ընկերությունը 2010թ-ի վերջի դրությամբ ունի 15 աշխատակից, որոնցից 9-ը ունեն արժեթղթերի շուկայի մասնագետի ընդհանուր որակավորում, մեկը՝ ներդրումային ընկերության գլխավոր հաշվապահի որակավորում, իսկ երկուսը՝ պահառուի որակավորում: 2010թ-ի ընթացքում ընկերության մեկ աշխատակից գործուղվել է արտասահման՝ իր մասնագիտական մակարդակը բարձրացնելու նպատակով: Բացի այդ մի քանի անգամ կազմակերպվել են կոլեկտիվի հավաքներ, որոնց նպատակն է եղել ընկերությունում առկա խնդիրների վերհանումը, ինչպես նաև աշխատակիցների միջև փորձի փոխանակումը: Ընկերությունը կիրառել է նաև պարգևատրման մեխանիզմներ՝ աշխատակիցների մոտ ընկերության նկատմամբ նվիրվածությունը բարձրացնելու նպատակով:

ը) 2010թ-ի ընթացքում ընկերության կողմից առաջարկվող ծառայությունների ցանկում ավելացել են արժեթղթերի պահառությունը և անվանական արժեթղթերի

սեփականատերերի ռեեստրի վարումը: Դրա հետ կապված ընկերությունում ներդրվել և լիարժեքորեն կիրառվում է արժեթղթերի պահառության և ռեեստրի վարման համակարգչային ծրագիր, որը դեռևս ունի որոշ թերություններ և գտնվում է կատարելագործման փուլում:

բ) Ընկերության կողմից 2010թ-ի ընթացքում իրականացվել են մի շարք մարկետինգային միջոցառումներ: Մասնավորապես բազմաթիվ պոտենցյալ հաճախորդների ուղարկվել են ընկերության ծառայությունները ներկայացնող թերթիկներ, ընկերության աշխատակիցները ընկերութան մատուցած ծառայությունները և դրանց պայմանները ներկայացրել են նաև հեռախոսազանգերի միջոցով: Բացի այդ իրականացվել է նաև գովազդ. ընկերության ծառայությունները ներկայացնող գովազդային բաններներ են տեղադրվել մի շարք ինտերնետային կայքերում, ինչպես նաև գովազդային նյութեր են փակցվել որոշ թաղամասերի բարձրահարկ շենքերի վերելակներում:

3. Արտաքին միջավայրում տեղի ունեցած երևույթները ունեցել են իրենց ազդեցությունը ընկերության քաղաքականության և նրա գործունեության արդյունքների վրա: Այդ ազդեցությունը դրսևորվել է հետևյալ առումներով.

ա) չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի արժեթղթերի շուկան դեռևս ինտեգրված չէ միջազգային ֆինանսական շուկայի հետ, համաշխարհային ֆինանսական ճգնաժամը 2010թ-ին շարունակեց իր բացասական ազդեցությունը ունենալ ընկերության գործունեության արդյունքների վրա: Այդ ազդեցությունը, ինչպես նախորդ տարում, այս տարում նույնպես դրսևորվեց ընկերության հաճախորդների պասիվության միջոցով, որոնց մեծ մասը ընդհանրապես զերծ մնաց ներդրումներ իրականացնելուց, իսկ մի մասն էլ իրականացրեց, սակայն ոչ այն ծավալով, որով կիրականացներ, եթե չլիներ ճգնաժամը: Դրա արդյունքում կրճատվեց նաև ընկերության կողմից գանձվող միջնորդավճարի ծավալը:

բ) Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունը շարունակվեց նաև Հայաստանի ողջ տնտեսության վրա, ինչի արդյունքում 2010թ-ին գրանցվեց շատ փոքր տնտեսական աճը: Հայաստանի տնտեսությունը դեռևս չի կարողանում վերականգնել իր ներդրումային գրավչության առանց այդ էլ ցածր մակարդակը: Այդ պարագայում առավել բարդ է արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպումը, նախ որովհետև ավելի դժվար է գտնել այնպիսի թողարկողներ, որոնց ֆինանսական դրությունը թույլ է տալիս իրականացնել նման գործողություն և որոնք ցանկություն ունեն իրականացնել թողարկումը, և երկրորդ, որովհետև շատ դժվար է նաև գտնել ներդրողներ, որոնք կցանկանան գնել նոր թողարկվող արժեթղթեր: Այդ իսկ պատճառով ընկերությունը 2010թ-ի ընթացքում չկազմակերպեց արժեթղթերի ոչ մի հրապարակային տեղաբաշխում:

գ) NASDAQ OMX Group-ի մուտքը Հայաստանի կապիտալի շուկա այդպես էլ չտվեց այն արդյունքները, որոնք սպասվում էին: Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանի կապիտալի շուկան դեռևս գտնվում է NASDAQ OMX Group-ի պահանջներին և մոտեցումներին համապատասխանեցման անցումային փուլում: Դրա հետ մեկտեղ ակնհայտորեն մեծացել է նաև ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտի մրցակցությունը, շնորհիվ այն բանի, որ մի շարք բանկեր արդեն մուտք են գործել շուկա և առաջարկում են իրենց ներդրումային ծառայությունները: Ընդ որում բանկերը, լինելով ֆինանսապես ավելի հզոր կառույցներ, ավելի հեշտ են կարողանում պոտենցիալ հաճախորդներին համոզել, որպեսզի վերջիններս օգտվեն իրենց ծառայություններից:

դ) Հայաստանի արժեթղթերի շուկան կարգավորող իրավական դաշտը շարունակում է մնալ նոր է և դեռևս լիարժեքորեն չփորձված: Դրան գումարվում է նաև այն հանգամանքը, որ այդ դաշտը փաստորեն խիստ դինամիկ բնույթ ունի և հաճախակի փոփոխությունների է ենթարկվում: Այդ փոփոխությունների հաճախականությունը այնքան մեծ է, որ շատ դեպքերում մինչև ընկերությունները հասցնում են ադապտացվել նախկին փոփոխությանը, ի հայտ է գալիս նորը: Օրենսդրական դաշտի նոր լինելու հանգամանքը որոշակի բարդություններ է ստեղծում, այն պատճառով, որ հաճախ առաջանում են իրավական ակտերի տարբեր դրույթների կիրառման հետ կապված հարցեր, որոնց միանշանակ պատասխանը հնարավոր չի լինում գտնել: Ընկերությունը ստիպված է լինում սպասել, մինչև Կենտրոնական բանկը կտա կոնկրետ հարցի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում: բացի այդ նոր իրավական ակտերի պահանջների բավարարումը կապված էր նաև որոշակի ծախսերի հետ:

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Ընկերության վերլուծական բաժնի աշխատանքի արդյունքում բացահայտվել է, որ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն ունի հետևյալ ուժեղ կողմերը:

1. Ընկերությունը շուկայում գործում է 15 տարի (ավելի, քան Հայաստանի արժեթղթերի շուկայում գործող ցանկացած այլ ոչ բանկ ֆինանսական ընկերություն),
2. Ընկերության գրեթե բոլոր աշխատողները ունեն արժեթղթերի շուկայում գործելու մասնագիտական որակավորման հավաստագրեր,
3. Ընկերությունը ունի հավատարիմ հաճախորդների լայն շրջանակ, այդ թվում ոչ ռեզիդենտներ և ինստիտուցիոնալ ներդրողներ,
4. Ընկերությունը ունակ է իր հաճախորդներին ապահովել Հայաստանի ֆինանսական շուկայի վերաբերյալ վերջին նորություններով և վերլուծական նյութերով, նաև ներկայացնել Հայաստանում շրջանառվող արժեթղթերի գների առաջին ինդեքսը, որի ստեղծողը հենց «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն է,
5. Ընկերության աշխատակիցները երիտասարդ և նպատակասլաց են, ինչը նրանց օգնում է արագ և հեշտ հարմարվել փոփոխվող միջավայրին, լիովին հասկանալ բոլոր նորամուծությունները և արդյունավետ գործել շուկայում,
6. «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն Հայաստանի արժեթղթերի շուկայում գործունեություն ծավալող ոչ բանկ ընկերություններից առաջինն է և միակը, որ ունի բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ և հակված է աշխատել առավելագույն թափանցիկության պայմաններում,
7. Ընկերությունը կորպորատիվ արժեթղթերի շուկայում զբաղեցնում է առաջատար դիրքեր՝ 2010թ-ին կատարելով Հայաստանի ֆոնդային բորսայում բաժնետոմսերով կնքված բոլոր գործարքների ընդհանուր ծավալի շուրջ 83 %-ը,
8. «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն Հայաստանի արժեթղթերի շուկայում գործունեություն ծավալող ներդրումային ընկերությունների շարքում ամենամեծ սեփական կապիտալը ունեցող ընկերություններից մեկն է,
9. Ընկերությունն ունի հատուկ իր համար գրված և իր կողմից մատուցվող ծառայություններին համապատասխանեցված համակարգչային ծրագրեր:

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն Ա. Կայֆաջյան

15/04/2010թ.

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հայտարարում ենք, որ պատասխանատվություն ենք կրում.

1. ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝
   ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
   բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,
   գ. Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման, իսկ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
   դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
   ե. ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,
2. ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
3. ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ մեր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար

Հավաստիացնում ենք, որ ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ

գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյան

գլխավոր հաշվապահ Սիրանուշ Խլղաթյան

17/01/2011թ.